ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵԲՈՒՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«02» 12 2021 թ.
№ 24/1-5/3002կ

ք. Երևան, Սասունցի Դավթի փող., հ. 87
Հեռ.՝ (+374 11) 518 304
Էլ. փոստ՝ erebouni@yerevan.am

«ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ Ս. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ
/Ք.ԵՐԵՎԱՆ, ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ Փ. 2-ՐԴ ՆՐԲ. 8 Շ. ԲՆ. 118/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 09.07.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-3» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի թեքահարթակների կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Երևանի քաղաքապետարանի և «ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 09.07.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/35-3» ծածկագրով գնման հավելված 1-ի սահմանված ծավալաթերթ-նախահաշվով պետք է իրականացվեն՝ ՀՀ ք.Երևան, Էրեբունի վարչական շրջանի Էրեբունի փողոցներում թեքահարթակների աշխատանքներ:

Վերոնշյալ Պայմանագրի N2 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի ավարտը սահմանվում է համաձայն հավելված 2-ի՝ 153 օրացուցային օր:

Նշված պայմանագրի 3-րդ մասի 3.1.4 կետի ա) ենթակետի՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 713-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Եթե կապալառուն ժամանակին չի սկսում կապալի պայմանագրի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու վնասները»:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Կնքված պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուի կողմից չեն կատարվել: Այդ մասին վերջինիս բազմիցս տեղյակ է պահվել և առաջարկվել է սեղմ ժամկետում իրականացնել թեքահարթակների կառուցման աշխատանքները, քանի որ եղանակային պայմաններն էլ գնալով վատթարանում են, սակայն կրկին որևէ աշխատանքի չի իրականացվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությունն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնակատարի 21.10.2021թ. 24/1-8/25732ել գրության և 04.11.2021թ. 24/1-8/27208ել գրության պահանջները, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում «ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության հետ կնքված «ԵՔ–ԳՀԱՇՁԲ-21/35-3» ծածկագրով գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքի մասին համաձայնագրերը՝ ԵՔ–ԳՀԱՇՁԲ-21/35-3/ կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով կներկայացվեն <<Կոնվերս բանկ>> ՓԲ ընկերություն տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից /որակավորման ապահովում 253.139 ՀՀ դրամ և պայմանագրի ապահովում 168.760 ՀՀ դրամ Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությունը, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ՀԱԿՈԲ ԲԱԼԱՅԱՆ**

Իրավաբանական բաժին
Կատ.՝ Հ. Կնյազյան
(0 11)518340